Քուրդ իշխանի վաղուց փափագած բաղձանքը հէնց այն էր, ինչ որ առաջարկում էին հայոց առաջնորդն եւ տանուտէրները: Դաւադրութիւնը սահմանւում է, իսկ գործադրութիւնը նշանակւում է զատկի աւագ շաբաթի գիշերը: Նոյն գիշերը, երբ Մելիքը իր ընտանիքով բոլորել էին ճրագալոյցի սեղանի շուրջը, յանկարծ նրա ամրոցը պաշարւում է բազմաթիւ քրդերով: Մի քանի րոպէում հրդեհը չորս կողմից սկսւում է տարածոել դէպի ներսը. ամրոցը կորչում է ծուխի եւ բոցերի մէջ: Պարիսպները խորտակւում են եւ ներս է թափւում կատաղի ամբոխը: Սկսւում է սարսափելի կոտորածը: Մելիքը երկար քաջութեամբ կռւում է, բայց շատ վէրքեր ստանալով, վերջապէս ընկնում է նա: Մըհեն կրակի, օրերի եւ գնդակների միջից յափշտակում է իր, դեռ ոչ բոլորովին անշնչացած, տիրոջը: Բայց նրա բոլոր որդիքը, աղջիկները, ծառաները եւ աղախինները կոտորւում են: Ազատւում է միայն Մելիքի մի հատիկ աղջիկը՝ փոքրիկ Մարօն, որին ստնտուն փախցնում է:

Բայց դրանով բոլորը չէ վերջանում: Ժողովրդի մեծ մասը չէր ցանկանում զրկոել իր գլխաւորից, որ այնքան սիրելի էր բոլորին, որ միշտ հօր պէս խնամել էր նրանց կեանքը եւ պատիւը թշնամիներից: Ժողովուրդը ոտքի է կանգնում, սկսում է ընդդիմանալ քուրդ իշխանին: Բայց ի՞նչ կարող է անել մի անգլուխ ժողովուրդ, որ առաջնորդող չունի: Մի քանի ամբողջ շաբաթներ Ասունը եւ Մոգաց երկիրը դարձել էին արեան եւ կոտորածի ասպարէզ: Մելիքը վիրաւորած առիւծի նման հեռոից մռնչում էր, բայց ոչնչով չէր կարող օգնել: Քրդի սուրն անխնայ կոտորում էր եւ նոյն սրին ուժ եւ զօրութիւն տոողներն էին նոյնպէս հայեր, չա՜ր եւ եղեռնագո՜րծ եկեղեցականներ...

Ժողովուրդը վերջապէս նոաճւում է օտարի լծի տակ... քուրդ իշխանը տիրում է...

Այնուհետեւ հազարաւոր մարդիկ որոնում էին Մելիքին, որովհետեւ նրա դիակը ամրոցի կոտորածի մէջ չգտնոեցաւ: Բայց նա Մըհէի հսկայական ուսերի վրայ, անմատչելի լեռներից եւ ձորերից անցնելով, արդէն փոխադրոել էր Պարսկաստան:

Քեռի Պետրոսի պատմութիւնը ինձ վրայ սարսափելի տպաւորութիւն գործեց. ես բոլոր մարմնով դողում էի, եւ մանաւանդ աւելի եղաւ իմ բարկութիւնը, երբ տէրտէրն՝ այս բոլորը լսելուց յետոյ՝ ասաց առածի ձեւով.

— «Չարը միշտ չարով կսասանոի». — «Սրի հետ խաղացողը միշտ սրով կմեռնի», — եւ աւելացրուց. — Այսպիսի մարդիկ ոչ միայն իրանց անձի կորստեան պատճառ են դառնում, այլ ժողովրդին էլ արեան եւ կրակի մէջ են գցում: